Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 03030000-1

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«06» մարտի 2017թ. *Շիրակի մարզ*

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և մարզի մարզի <<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Աննա Մկոյանի, որը գործում է <<Ամասիայի առողջության կենտրոն>>ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 3-ի թիվ 685-Ա հրամանը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. *Պատվիրատուի և Կատարողի միջև 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-03030000 պայմանագրի*
   1) հավելված 2-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի,
   2) հավելված 6-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 2-ի:
2. *Սույն համաձայնագիրը իր հավելվածներով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:*
3. *Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:*
4. *Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից:*

ՀՀ ԱՆ աշխատակազմի
ղեկավար՝ Նելսոն Զուլոյան

/ստորագրություն/

« Ամասիայի առողջության կենտրոն » ՓԲԸ -ի
տնօրեն՝ Աննա Մկոյան

Digitally signed by MKOYAN ANNA
8008730552

/ստորագրություն/